



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

371.5  
Տ-25

Հրատարակութիւն Ա. Յովհաննիսեանի  
Բ.

217

1952B

# ՄԱՐԿԱԿԱՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵՑ

ՍԵԴՐԱԿ ՍԱՆԳԻՆԵԱՆ

Եւաջ Տիխիսու Ներսիսեան Աղբալին Հոգևոր Դպրոցի:

370  
2177-ՍԱ



ՏՓԹԻՍ

1875

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՁՈՒՄ ԸՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ

370  
2177-ՍԱ



Հայոց ուսումնարանի

ը ն տ ի ր.

ԳԱՁՏՈՆԵԱՆԵՐԻՆ ԵՒ ԲԱՐԵՆԱՍՆԵՐԻՆ

Дозволено цензурою Тифлисъ. 11-го Января 1875 г.

նուէր

2801

2010



8442

371.5  
U-25 <sup>26</sup>

# Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն

## սահմանադրութիւն:

(ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ)



### ՅԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ:

§ 1. Գարոցական սահմանադրութիւնն է այն բոլոր կարգադրութիւնների ամփոփումն, որոնցից զգրոցի կենդանի կազմակերպութիւնը պիտի բղխուի, և այդ հիման վերայ անհրաժեշտ կարևոր պիտի համարուին:

§ 2. Նա պէտք է օժանդակէ, որ զգրոցի նուիրական, բարոյական գաղափարները ճշտիւ և ճշմարտութեամբ կատարուին և իրագործուին, ուստի և սերտ կապուած է այդ գաղափարների պահանջմունքների հետ:

§ 3. Որպէս ամենայն գաղափարների իրագործութիւնը, նոյնպէս և զգրոցական սահմանադրութիւնը առանձին իմն ուշադրութիւն պիտի դարձնէ անձ-


1004  
15451

նական, տեղական և ժամանակակից հանգամանքներին վերայ, որոնք մի որոշեալ ուսումնարանի մէջ զլիսաւոր ազդեցութիւն են ունենում՝ նոյն իսկ պահանջմունքները իրագործելու ժամանակ:

§ 4. Արդ այս սահմանադրութիւնն էլ պիտի աշխատէ, որ նոյն կրկնակի պահանջները լցուցանէ. այսինքն որ մի կողմից հաստատ պահպանէ դպրոցի գաղափարը, և միւս կողմից եղած հանգամանքների մէջ յարմարուի:

§ 5. Նա նկարագրում է նախ և առաջ ընդհանուր մասի մէջ այն հանգամանքները, որոնք դպրոցի ամբողջական կատերելութեան վրայ ազդում են և ապա առանձին մասի մէջ վիշտակում է այն կարգադրութիւնները, որոնք դպրոցի ուսման յառաջադիմութիւնը և դպրոցի ներքին կենաց բեղմնաւորութիւնը պայմանաւորում են:

§ 6. Սահմանադրութիւնը պիտի ընդունուի իբրև համակամ ուխտ այն բոլոր պաշտօնակիցների, որոնք դպրոցի մէջ ներգործում են, մինչև որ նոյն համակամ ուխտով թէ ընդհանրապէս և թէ մասնաւորապէս փոփոխութեան չենթարկուի:



### Ընդհանուր մասը:

§ 7. Ամենայն կարգ և սահմանադրութիւն նախ և առաջ դպրոցի մէջ գործող անձինքներից է ծագում, և ուրեմն պէտք է սոցա մէջ մարմին և կենդա-

նութիւն ստանայ, որ յետոյ մտնի սոցանկից սահմանած կարգադրութիւնների մէջ:

### I. ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

§ 8. Սահմանադրութիւնը պահպանող և խնամող անձինք են՝ Տեսուչ, Ուսուցիչներ, Աւագ վերակացու, վերակացուներ, Նստարանապետներ, (պաշտօնակատար աշակերտներ):

#### 1. Տեսուչ:

§ 9. Տեսուչն է ամբողջ դպրոցի առաջնորդին ու ներկայացուցիչը. նա խնամարկում է, որ բոլոր գորութիւնները օժանդակին միմեանց պատշաճաբար և բոլոր մասերը պահպանեն իրարու մէջ կենդանի կապակցութիւն: Նա չէ ոչ ուսուցիչ և ոչ վերակացու, այլ այս գործող զօրութեանց առաջնորդող. և իբրև առաջնորդող—է միակ պատասխանատու իւր մերձակայ իշխանութեան առաջ՝ դպրոցի առողջ կազմութեան համար—ուստի և ներկայացուցիչ է:

#### 2. Ուսուցիչներ:

§ 10. Երկու կարգ ուսուցիչներ կան, որոնք են՝ հարազատ և արտաքոյ կարգի անդամք դպրոցի:

§ 11. Դպրոցի հարազատ անդամներն են նոքա, որոնք իբրև անդամք մէկ ընտանիքի՝ դպրոցի ամէն կազմութիւնների մէջ մասնակից են և արտաքոյ զբարոցի օտար գործքերով կապուած չեն: Նոքա պարտաւոր են մանաւանդ բոլոր ժողովները հաճախել:



§ 12. Ժողովները երեք տեսակի են՝

ա. Մեծ և մեծ, ուր գլխավորապէս մեթոդիկական, դիդակտիկական և հոգեբանական նիւթերն են նիստերի լսօսակցութեանց առարկան.

բ. Վարչական, ուր նախ և առաջ վարչութեան խնդիրները լուծուում են. և

գ. Գործնական, ուր իւրաքանչիւր առարկայի վարժապետները քննութեան են ենթարկուում, թէ՛ դպրոցի մէջ ընդունած դիդակտիկական և մեթոդիկական պահանջներին որքան հաւատարիմ են մնում:

§ 13. Գպրոցի արտաքոյ կարգի անդամները նոքա են, որոնք որ միայն առանձին կազմութեանց մէջ մասնակից են, և դպրոցից դուրս կապուած են:

§ 14. Առսուցչութեան պաշտօնը ընդունելով՝ ամենայն ոք ուխտ է կապում դպրոցի հետ, թէ՛ քանի որ նորա մէջն է՝ հաւատարմութեամբ կը ծառայէ, և բոլոր պարտականութիւնները ճշտութեամբ և սրբութեամբ կը կատարէ:

§ 15. Առսուցչի գլխաւոր պարտականութիւններն են՝

ա. Բարեխղճութեամբ կատարել յանձն առած դասատուութիւնը.

բ. Չգտել, որ սահմանադրութիւնը գործադրելու ժամանակ և բոլոր որոշումները կատարելու ժամանակ, միութիւն պահպանուի.

գ. Միշտ հաճախել ժողովներին.

դ. Յանձն առնուլ և հաւատարմութեամբ կատարել այնպիսի պաշտօններ, որոնք դրայրոցի յառաջադիմութեան հետ սերտ կապուած են:

Ծանօթ. Ով որ մի որևիցէ պատճառով արդելուցս դրայրոցի մէջ դալու, նա պէտք է ժամանակ չկորցրած Աւագ վերակացուն իմաց տայ, որպէս զի փոխանորդել կարելի լինի և դպրոցի կանոնաւոր ընթացքը չխանգարուի:

§ 16. Պատրաստելու և աւանդելու ժամանակ դասատուութիւնը միշտ պէտք է յարմարուի ընդհանուր մեթոդիկական պահանջներին ևս և դպրոցի դասընթացի հետ:

§ 17. Բոլոր ուսուցիչները՝ կարգապահութիւն հաստատելու ժամանակ և պատիժներ գործ ածելու ժամանակ՝ պէտք է միահամուռ գործեն իրրե մի անձ. այսպիսի միութիւնը իրօք հաստատելու համար, հարկաւոր է և պէտք է որ ամէնքը ճշտութեամբ սահմանադրութեան պատուէրները պահեն, շուտ շուտ միմեանց այցելութիւն գնան, և իրանց կամ միւսաների դասատուութեան ժամանակ նկատած վարչութեան ամենայն տեսակ դէպքերը ժողովների մէջ լսօսակցութեան առարկայ չինեն:

§ 18. Ամենայն ուսուցիչ § 12-ի մէջ յիշատակած ժողովների մէջ ամէն մէկ չզտնուելու համար պարտաւոր է առաջուց լուծումն խնդրել:

§ 19. Վարչական ժողովն է մի հաստատութիւն, ուր դպրոցին վերաբերեալ ամենայն բաների վերայ լսօսուում է, բացի դիդակտիկական և մեթոդիկական հար-



ցերից: Այնտեղ պէտք է յայտնուին ուսուցիչների ամենայն տարակուսութիւնները, ազդարարութիւնները, առաջարկութիւնները, կարծիքները, գանդատները, և այն տեղ պէտք է լուծուին վարչութեան մէջ ծագած տարաձայնութիւնները:

§ 20. Այս ժողովի մէջ մանաւանդ խօսուում է աշակերտների անձնաւորութեանց և բնաւորութեանց վերայ. այստեղ են պատրաստուում կէս տարեկան կամ քառորդ տարեկան յառաջադիմութեան թուանշանները:

§ 21. Ամենայն ընտրութիւններ կատարուում են այդ տեղ, և ամենայն նոր կարգադրութեան վրայ այդ տեղ է խօսուում՝ ուր և սահմանուում է:

§ 22. Գա ունէ և դատաւորական նպատակ, որովհետև երբեմն վճուում է թէ այսինչ յանցանքը ինչպէս պէտք է պատժուի և մինչև անգամ երբեմն պատիժը ինքն է կատարում:

§ 23. Գործնական ժողովի գլխաւոր նիւթը՝ է դասատուութիւն: Ամենայն ուսուցիչ պարտաւոր է իւր բոլոր պաշտօնակիցների առաջ մի կամ անկի դասախօսութիւն անել, որպէս զի յետոյ մանրամասն և ճիշտ քննուի՝ դասատուութեան վերաբերութեամբ զըպրոցի ձգտած միութիւնը պահպանելու համար:

§ 24. Ամենայն ուսուցիչ իրան պատիւ պէտք է համարէ անկեղծ և համարձակ ճշմարտութիւն յայտնելը, բայց և իր սեպուհ պարտականութիւնն է՝ պատուել իր պաշտօնակիցների անձնաւորութիւնը և նարզը: Ամենայն տարաձայնութիւն մինչի միւս ժո-

ղովը վերջացած պիտի համարուի, և չպիտի խանգարէ դպրոցական խաղաղ կեանքը:

§ 25. Բոլոր ժողովները առաջնորդում է տեսուչը և նա է միշտ վախճանական վճիռ տալիս:

§ 26. Ամէն մէկ ժողովի համար մի հերթակալ անդամը արձանագրութիւն է կազմում, որ մերձակայ ժողովի մէջ կարդացուում, և կթէ հարկն է լրացուում և ուղղուում է:

§ 27. Արբողջութեան միջից առանձին յանձնաժողովներ են կազմուում՝ մասնաւոր խնդիրները լուծելու համար: Գոցա հաշուում են՝

- ա. Յանձնաժողով խնամակալութեան համար,
- բ. Պարտիդի մշակութեան և դործնական զբաղմանց համար,
- գ. Մարմնամարզութեան համար,
- դ. Բնական նիւթերի ժողովածուների համար,
- ե. Ճանապարհորդութիւնների և ուսումնական ճամկեաց համար,
- զ. Երգեցողութեան և նուագի համար:

Նորա ժամանակ ժամանակ ժողովին հաշիւ են տալիս իրանց գործունէութեան մասին:

§ 28. ա. Խնամակալական յանձնաժողովը առանձին հսկողութեամբ և խնամքով մերձենում է այն աշակերտներին, որոնք որեկից կողմից ծանր թերութիւն ունին: Յանձնաժողովի անդամները իրանց հսկողութեանը յանձնուած մանուկներին չէ թէ միայն դպրոցի և պարտիդի մէջ աչքի տակն են պահում, ապա և նոցա տունը այցելութիւն են գնում և



կարողութեան չափ ամենայն հանգամանքները վրայ ազդում են, որոնցով իրանց յանձնուած սանը բաբոյապէս զօրանալ կարող է: Այդ յանձնաժողովը ինքըն իրան հաշիւ է տալիս իր կատարած գործքի մասին և խորհրդածում է, թէ ամէն մէկ պատասպարեալին ինչպէս կարող է օգնել:

§ 29. Ը. Պարտիէի ճշտութեան համար յանձնաժողովը կարգադրութիւններ է անում պարտէզը զարդարելու, ցանկու, աճեցնելու և մշակելու համար, գործիքները նորոգելու և ձեռք բերելու և ուրիշ այսպիսի բաների համար, եթէ վարչական ժողովից նախապէս պատուէր է ստացել: Անդամները ամենայն օր՝ բայց հերթով հսկում են աշխատաւորները վրայ, որոնք այս կամայն դասատան աշակերտները են բաղկացած: Մէկը ծախսարարութեան առանձին հաշիւն է պահում:

Ծանօթ. Այս յանձնաժողովի առաջնորդութեանն է յանձնած նաև գործնական գրադրուները, որոնք ամենայն տեսակ թեթև արհեստական վարպետութիւն են սրահանջում, զորօրինակ կազմարարութիւն, հիւսնութիւն, և այլն (բաւական է միայն յիշեցնել, թէ աշակերտները պէտք է կարողանան թեթև ֆիզիքական գործիքներ և անօթներ շինել):

§ 30. Գ. Մարտարդութեան համար յանձնաժողովը այդպիսի վարժութիւններն է անել տալիս. մերձաւոր հակողութիւն ունէ մարմնամարդութեան գործիքների վրայ, ուսուցչական ժողովին հաշիւներ և առաջարկութիւններ է տալիս:

§ 31. Դ. Բնութեան նշանների ժողովածուների համար յանձնա-

ժողովը աշխատում է, բնական — պատմութեան և ֆիզիքայի հանդիսարանը պահպանել և բազմացնել: Աղած իրեղէնների մասին մի ցուցակ է պահում և հսկում է նոցա կարգաւորութեան և դասաւորութեան մասին: Մի անդամը պահում է գանձը և հաշուէտոմարը և համարուհաշիւ է տալիս:

§ 32. Ե. Զանգարհորութեան համար յանձնաժողովը հաշիւ է պահում ճանապարհորդութեան գանձի մասին, պահպանում է ճանապարհորդութեան իրեղէնները և ամենայն մասամբ օգնում է պատրաստութեանը՝ որով աշակերտները զբաղած են ճանապարհորդութիւնը սկսելուց առաջ:

§ 33. Կ. Երգչախումբի և նուազի շաշաւի համար յանձնաժողովը վերահայեցողութիւն ունէ գործիքների լաւ դրութեան վրայ, աշակերտներին նուազի դաս է տալիս. աշխատում է չորս ձայնանի երգչախումբիւն մտցնել աշակերտաց և ուսուցչաց մէջ: Մէկ անդամը հաշուապահ է:

3. Աւագ վերակացու:

§ 34. Աւագ վերակացուն է նախ և յառաջ գլխաւոր:

ա. Նա ժողովում և պահում է տարէգրութիւնը, ուր պարունակւում է դպրոցի անդամներից ստորագրած անունների, ամենայն քառորդ տարուայ դասընթացների ցուցակը, հարցաքննութեանց պատկերը և ուրիշ տեսակ ցուցակները, դպրոցական անցքերի վը-



րայ տեղեկութիւնները և արժանի ուշադրութեան դէպքերը:

բ. Նա կազմում է դպրոցին վերաբերեալ վիճակագրական թղթեր:

գ. Նա տալիս է մի համառօտ պատմական տեղեկութիւն դպրոցի հիմնարկութեան տօն օրին՝ նոյն հիմնարկութեան և շարունակ կազմութեան կամ փոփոխութեանց մասին, ուր առանձին մանրամասն պատմում է վերջին տարուայ դէպքերը, որ իբրև պատմութեան նիւթ զիւանաթղթերի մէջ մտնում են: Չբւէտք է մոռանայ նաև բարերարներին և նոցա կտակած կամքի իրազործութեան ճիշտ պատկերը:

§ 35. Աւագ վերակացուն է դարձեալ հոշոտութիւն:

ա. Նա ժողովում է կամաւոր սուրբ դպրոցի արտաքոյ կարգի ծախքերի համար:

բ. Նա է ծախս անում այդ գումարից ընթերցանութեան դրքեր, օրագիրներ գնելու համար, աշակերտաց ճանապարհորդութեան համար, աղքատ աշակերտաց օժանդակութիւն տալու համար և այլն, որ ինչ ուսուցչական ժողովը նորան կը պատուիրէ:

գ. Երբէմն երբեմն համարուհաշիւ է տալիս ուսուցչական ժողովին, որ և պէտքէ ստուգուի:

§ 36. Վերջապէս նա է հոշոտութիւն, այս պաշտօնով նա գոր օրինակ. դպրոցական հանդէսների ժամանակ Տեսչից պատուէրներ է ընդունում, հարկաւոր

տպասարանքեր անում և կարգադրութիւններ յօրինում:

§ 37. Բացի յիշեալ պաշտօններից՝ Աւագ վերակացուի վրայ է մնում նաև տեսչի բացակայութեան ժամանակ՝ նորա պաշտօնակատարութիւնը: Իսկ տեսչի ներկայութեան ժամանակ ևս է նա նորա առաջին օգնականը, որպէս հետեւալ յօդուածները յայտնում են:

§ 38. Նա հսկում է դպրոցի ամբողջ կազմութեան վրայ և պարտական է հաճախակի հաշիւ տալ տեսչին:

§ 39. Նա պէտք է այլատէ բոլոր աշակերտներին մերձենալ՝ նոցա մասնաւոր պարապմանց ժամանակ օգնութիւն, խրատ և խորհուրդ տալով, բացակայ ուսուցչի փոխարէն դաս տալ, եթէ մի ուրիշ ուսուցիչ փոխանակել չկարողացաւ. կարող է նա ինքը մի առանձին դասատուութիւն յանձն առնուլ, բայց ոչ աւելի շաբաթական 12 դասից:

§ 40. Նա պէտք է հսկէ, որ դասատուութեանց պատրաստութեանց և դասամիջոցների ժամերը կանոնաւոր կերպով ընթանան. պէտք է առաջնորդէ հանդէսների և խաղերի պատրաստութիւնն ու կատարումը. ծանր յանցանքները, եթէ հարկաւոր է նկատէ և տեսչին յայտնէ, իսկ եթէ դէպքը նոյն բովանդակ լուծում է պահանջում, իսկոյն անձամբ լուծէ, բայց առանց յապաղութեան տեսչից վաւերացում ուղէ:

§ 41. Նա է պատրաստում հարցաքննութեանց պատկերը և ուրիշ վիճակագրութեան տեղեկութիւնները, որոնք դպրոցի վերին իշխանութեան պէտք է



մատուցանուին. պահում է դասատուներին մատենաները, արձանագրութիւնները, դասատան մէջ գործածած քարտէշները, պատկերները և այլն:

§ 42. Նա կառավարում է ուսուցչաց զբառուներ: Նոյնպէս նա է առաջնորդում աշակերտաց ամենայն կողմանէ՝ զրբերի ընթերցանութեան ժամանակ:

§ 43. Նմանապէս նա է աչքի տակ պահում միւս բոլոր գործիքները՝ ինչպէս ճանապարհորդութեան իրեղէնները, երաժշտական և պարտիզի գործիքները՝ և ամենայն բան, ինչ որ տան և պարտիզի մէջ զբոսնում են, և եթէ հարկ է տեսչի համաձայնութեամբ և պատկանեալ դասատան հաշուով նորոգել և լրացնել է տալիս: Ուրեմն նա է յանձնաժողովներին (տես § 27. և հետեւեալները) նախագահ և զործավար անդամ:

§ 44. Նա հսկում է վերակացուների վրայ և պէտք եղած ժամանակ նոցա օղնութիւնն է պահանջում:

§ 45. Ամենայն տարակուսանաց զէպքերում պէտք է տեսչից հրահանգ ստանայ, և առհասարակ միշտ և շարունակ նորա հետ հաղորդակցութիւն ունենայ:

§ 46. Նա կարող է դպրոցից հեռանալ միայն արարձակուրդներին, բայց պէտք է մի փոխանորդ առաջարկէ տեսչին և սորանից թոյլտուութիւն ստանայ:

#### 4. Վերակացուներ:

§ 47. Ամենայն մէկ կամ երկու դասատան համար նշանակւում է մի վերակացու, որը իր պաշտօնով զբւ-

խաւորապէս դասատան ղեկավարն է. դասատան մեծ և փոքր հանգամանքների մերձակայ խնամողը և առաջնորդողը դա է, և դասատան առաջին պատասխանատուն ևս դա է: Եթէ դպրոցի մէջ որդեկիրներ կան, ուսումից յետոյ վերակացուներից մէկը հերթով մնում է դպրոցի մէջ օրապահի պաշտօնով:

§ 48. Վերակացուները ամենայն օր այցելութիւն են անում իւրեանց դասատուները, նայում են մաքրութեան և կարգի վրայ, նոյնպէս և վառարանների վրայ. աւագ վերակացուն և տեսչին իմաց են տնում նկատած թերութիւնները և այլ պակասութիւնները. ստուգում են դասատան մատենաները, ուր ուսուցիչներից արձանագրւում են աւանդած դասերը և դանցառութիւնները, և կատարում են մատենաների մէջ նշանակած ուսուցիչների պահանջները. դասի վերջը դասատունը փակել են տալիս և բանալին պահում են:

49. Տարուայ սկզբին նոքա կազմում են մօտաւորապէս դասատան զատնթացը, որ և տեսչի ձեռամբ ժողովին ներկայացնում են:

§ 50. Ուսման սկզբումը նոքա կախ են տալիս դասատան մէջ դասերի և իրեղէնների յուղակի, և իրանց աշակերտաց անունները դասատան մատենի մէկ թերթի վրայ դրում են:

§ 51. Նոքա ժամանակ ժամանակ պաշտօնակատար աշակերտներից պահանջում են, որ նոցա յանձնած դասատան իրեղէնները ցոյց տան ստուգելու, և եթէ



հարկաւոր է պաշտօնները յանձնում են ուրիշին:

§ 52. Նոքա կարող են դասեր տալ, բայց ոչ օրապահութեան օրը:

§ 53. Տարակուսանաց ժամանակ նոքա դիմում են նախ և յառաջ աւագ վերակացուին, և ամենայն շաբաթ ուսուցչական ժողովին տալիս են հաշիւ իրանց դասատան վիճակի մասին, ուր իհարկէ պէտք է վշուին և ուսման ժամանակ պատահած խանդարմունքները և աշակերտաց կամ վարժապետաց դանցառութիւնները:

5. Պաշտօնակատար աշակերտներ:

§ 54. Որպէս զի դպրոցի կազմութիւնը ամենայն կողմանէ և մանրամասնաբար կանոնաւորուի և հրակողութեան տակ լինի, որպէս զի ուսուցչաց և աշակերտաց մէջ անդադար հաղորդակցութիւն պահպանուի և որպէս զի ուսուցիչների փոքր ծառայութիւնների մէջ օգնութիւն տրուի՝ նշանակուած են ամենայն դասատան մէջ պաշտօնակատար աշակերտներ:

§ 55. Ամենայն աշակերտների պարտականութիւնն է ձգտել, որ ուսուցչաց հաւատարմութեան արժանանան. բարեխղճութիւն, ճշմարտութիւն, ճշտութիւն, հնազանդութիւն, անկեղծութիւն այնպիսի առաքինութիւններ են, որոնք հաւատարմութիւն են ծնում և ով որ դոցանով զարդարուած է, այնպիսեաց իսկ յանձնուած են պաշտօններ, ուրեմն պաշտօնի մէջ ընտրուիլը աշակերտի համար յարգ և պատիւ պիտի լինի:

§ 56. Ուսուցիչը պէտք է նոցա ամենայն կերպիւ-

պաշտպանէ իրանց պաշտօնակատարութեան ժամանակ, նախ ինքը պէտք է պահպանէ նոցա յարգը և ոչ մի կերպով չստորացնէ նոցա պաշտօնը, բայց և բնաւ չպէտք է գերազանցէ նոցա ուրիշներից և խրատութեամբ պէտք է հակէ, թէ չլինի որ նոքա կուսակցութենից, լատեսական մատուցեամբ կամ սնապարծութենից իրանց պաշտօնի սահմանից անցնեն կամ թէ պաշտօնը իսպառ ի չար գործ ածեն:

§ 57. Նոցա պաշտօնէ՝ ուսուցչի ուսման օր հարկն է, դասատան մէջ նկատած պակասութիւնը կամ պատահած խանդարմունքը, ուսուցչի բացակայութեան ժամանակ պեղեցիկ օրինակով կարգ ու կանոն պահպանել, և թէ ընդհիմակացողներին մասնել ուղենան, պէտք է հիմնաւոր ապացոյցներով հաստատեն, ուր միւս աշակերտների վկայութիւնն էլ պիտի համաձայնի:

§ 58. Է. Նոքա պէտք է փոքր ծառայութիւնները կատարեն, շուր բերեն, սանդուխներից իջնելու ժամանակ կամ խմբով դրօնակու ժամանակ ըստ առանձին պատուիրանաց կարգ պահպանեն, դրութեան կամ նկարչութեան ժամանակ ակտրալներ, մատիտներ և ուրիշ բաներ բաժանեն: Երբ ուսուցիչը դասի ժամանակ պակասողներին չլիքերի ցուցակում նշանակուած է, նոքա պէտք է պակասողներին յականէ անուանեն:

§ 59. Պաշտօնակատար աշակերտները ընտրում են այնքան:

1004  
15494





Թեանց համար հարկաւոր կը համարուին, բայց ամենայն շաբաթ հերթով մէկը սլիտի ընտրուի իբրև շաբաթապահ: Նա պէտք է շաբաթուայ մէջ զլիսաւոր հսկողութիւն ունենայ դասատան մէջ և զլիսաւոր պատասխանատուութիւն՝ թէ դասատան մէջ կանոնաւոր ընթացքը ոչնչով չի խանգարուի:

§ 60. Մանաւանդ նա պէտք է

ա. Մի փոքր տախտակի վրայ օրուայ թիւը դրել, գործիքներ և դասական միջոցներ պահարանից հանէ կամ վարժապետից ստանայ և միւս պաշտօնակալներին բաժանէ.

բ. Թանազամանների մէջ թանազ ածէ.

գ. Ամենայն օր ջուր բերէ, սպունդը թրջէ, տախտակը, կաթէղրը և ուսուցչին ստարանը մաքրէ.

հ. Պահարանի և դասատան բանալին վերակացուին տանէ.

զ. Գասատան իրեղէնների վրայ հսկէ և շաբաթուայ վերջը վերակացուին յանձնէ:

II ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

§ 61. Հետևեալ որոշումները չպէտք է ըմբռնել իբրև այնպիսի սահմանադիր կարգաւորութիւններ, որոնք լոկ միայն այն պատճառաւ պահպանվում են, որ մի անգամ մտցրած և աւանդութեամբ ընդունուած են, հատա իբրև ճշմարիտ միջոցը կրթութեան: Այդ սկզբան վրայ հիմնուած՝ դժբա ուշք են դարձնում, որ մանկանց մէջ կրօնական և եկեղեցական

զգացմունք զարգացնեն, ուրախութեան և վշտի մէջ մամնակցող, չնորհակալ և եղբայրական սէր զարթեցրեն, և հաւատարիմ պարտաճանաչութիւն սովորեցրեն:

§ 62. Մանկանց մէջ նախ և յառաջ էրեւիան և էլեւեյան բարեպաշտութեան կայծը արծարծելու և պահպանելու համար, և նոցա մէջ իրանց մանուկ տիոց ժամանակ արդէն մի զգացում զարթեցնելու համար, թէ դպրոցը իբրև փոքրերի ժողով սերտ կապուած է եկեղեցու հետ, որ հասակաւորների ժողով է՝ պէսպէս կարգաւորութիւններ են սահմանած:

§ 63. 1. Կիրակի և հանդիսական օրերին ճաշից առաջ ժողովում են բարձր դասաւանդների աշակերտները (ստորին դասաւանդիք նմանապէս, բայց կամաւ) դպրոցի մէջ: Մի քանի ուսուցիչները ևս այն տեղ են գտնուում, որոց առաջնորդութեամբ աշակերտները գնում են եկեղեցի՝ զանգահարելուց յետոյ: Երգեցողները գնում են զպիրը իրանց պաշտօնը կատարելու համար:

§ 64. 2. Կիրակուայ հանդէսը նախապատրաստելու և աւելի պողպեր կացուցանելու համար՝ բարձր դասատան աշակերտներին շաբաթ օրուայ առաջին դասին մեկնում են տօնին յարմար աւետարանը, սաղմոսները և աղօթքները, զլիսաւորապէս ուշք դարձնելով՝ որ այդ ընթերցուածքների և մաղթանքների շինողական իմաստը կենդանանայ և բեղմնաւորուի լսողաց մտքի մէջ:

§ 65. Ստորին դասաւանդում նմանապէս մի հոգե-



որ կամ բարոյական—չինողական խօսակցութիւն է լինում, սակայն հարկ չըկայ որ միշտ սուրբ զրոյ խօսքի հետ կամ եկեղեցական տօնի հետ կապուի:

§ 66. 3. Մեծ եկեղեցական տօները թէ բարձր և թէ ստորին դասատներում առանձին պատրաստուում են, այսինքն այն պատմական հանգամանքները, որից որ տօնը ծագում է, հաղորդւում և յիշողութեան ու սրտի մէջ վերստին արթնացնում, և նորա խորհուրդը քրիստոնէական եկեղեցու համար մեկնում է, տղոց հասակի և հասկացողութեան համեմատ: (կայսերական տօները նոյնպէս պատրաստուում եւ կատարուում են):

§ 67. 4. Մեր առաքելոց և Ս. Լուսաւորչի տօները մի քանի շաբաթով առաջ պատրաստուում են, ուր հեթանոսութեան և քրիստոնէութեան զանազանութիւնը իրարից և այս վերջինի մաքրեցուցիչ և փրկարար չնորհը առանձին պէտքէ տպաւորուի մանկանց սրտի մէջ:

§ 68. 5. Ամենայն օրը պէտք է աղօթքով սկսուի, որ կամ վարժապետը կամ մի աշակերտը ասում է. եթէ հնարաւոր է ամենայն անգամ ուսումը մի հոգեւոր երգով պէտք է սկսել, բայց այս կարելի է թողնել այն ուսուցչի հաճութեան, որը առաջին դասը սկսում է: Երգասացութիւնը պէտք է խորհրդաւոր և զգացած լինի: Փոքրերի դասատունը միայն երկու-չարթի օրը հանդիսաւոր կերպիւ բացում է—այսինքն աղօթքով:

§ 69. Որպէս զի մանկանց մէջ այն ճշմարտութիւնը խորը տպաւորուի, թէ ամենայն բան, նաև կեանքի մի երկար կամ կարճ բաժինը Աստուծ կան-

չելով պէտք է սկսուի և վերջանայ. և նոյա խղճի մէջ արձագանք լսուի, թէ նորա մի միութեան, մի ամբողջութեան հարազատ անդամներ են՝ ամէն շաբաթուայ կամ դպրոցական մի մեծ բաժնի սկզբին և վերջը աւելի երկար մաղթանք է կատարուում, ուր ամենայն վարժապետ և աշակերտ մասնակից է լինում:

§ 70. Երկուշաբթի առաւօտ բոլոր դասատան աշակերտները միատեղ ժողովուում են: Այն տեղ գալիս են և ուսուցիչները, վերակացուններն ու տեսուչը: Սոցանից մէկը մի խօսք է դարձնում աշակերտներին կարօտութեան և հանգամանաց համեմատ պարունակութեամբ. պէտք եղած ժամանակ նաև խրատում և զգուշացնում է. ապա միաձայն երգում են մի պատշաճաւոր երգ. և վերջապէս աղօթք ասելուց յետոյ միաբերան «ամէն», տեսիլով մաղթանքը վերջանում է: Ամենայն դասատանցիք հանդարտ գնում են իրանց սենեակները, ուր ուսումը սկսում է:

§ 71. Շաբաթ օրը ուսման վախճանին նոյն տեսակ մաղթանք է կատարուում: Մեծ արձակուրդներին ուսումնարանից դուրս գնալուց առաջ աշակերտները բոլոր վարժապետներից առանձին ողջոյն են առնում:

§ 72. Տարուայ վերջը բարձր դասատան աշակերտները արձակելու հանդէսն է կատարուում: Այս է անտարակոյս մի ծանր, վսեմ և սրտի խորքի մէջ թափանցող տօն: Այս տեղ պէտք է վերջին ողջոյն առնուի դպրոցի ասպնջական պատերից, այստեղ է



բացւում մեծ և ընդարձակ կեանքի մէջ մասնկու-  
անցքը, որի ուրախութիւնը կամ դառնութիւնը մար-  
դու աչքի առաջ դեռ սքողով պատած է:

§ 73. Աշակերտները և վարժապետները ժողովու-  
մն սրահի մէջ: Տեսուչը բացադրում է այս օրուայ  
խորհուրդն ու նշանակութիւնը. երգեր ասելով փո-  
փոխութիւն է լինում ամբողջ բաղմութեան և անջա-  
տողների մէջ. այս վերջիններից ամէն մէկը մի մի  
Աւետարան պարգև են ստանում. մի աղօթք և միա-  
ձայն «ամէն», ասելով վերջանում է: Եւ ապա ան-  
ջատողները իրանց վարժապետներին և աշակերտնե-  
րին ձեռք մեկնելով վերջին ողջոյնն են առնում:

§ 74. Նոյն տեսակ հանդէս է կատարւում, եթէ  
ուսուցիչներից մէկը հեռանում է:

§ 75. Ճշմարիտ ընկերական ոգի արծարծելու և ու-  
րախ ու խաղաղ կենակցութիւնը հաստատելու հա-  
մար՝ դպրոցը իր բազմաշխատ և խորհրդաւոր ձրգ-  
տողութեանց և դործողութեանց ժամանակ մի քանի  
հանդէպէ է տօնում, որոնք մեծաւ մասամբ կրօնա-  
կան—բարոյական նշանակութիւն ունին: Այս տեղ ու-  
սուցիչը անտարակոյս զեղեցիկ միջոց է գտնում՝ ա-  
մենայն ստիպողութիւնը բաց թողնելով՝ ազատու-  
թեամբ մանկանց ճիշտ ընտելութիւնը ձանաչել, նո-  
ցա ընտանեւար և բարեկամական սիրով մերձենայ և  
իր այսպիսի ազդեցութեամբ՝ նոցա սիրտը մաքրել և  
կրթել:

§ 76. ա. Գործուն հանդէպ կատարւում է մայիսի մէկ  
զեղեցիկ օրը: Ամբողջ դպրոցը հանդերձ ուսուցիչնե-

րով գնում են մի դաշարի տեղ, անտառը կամ պար-  
տէզը քաղաքից դուրս և տօնում է մայիս ամիսը եր-  
զերով և խաղերով:

§ 77. բ. Գպրոցի հիմար: Կանգնող ցանկալի է  
որ ամառը կատարուի: Առաւօտը բոլոր ժողոված  
ուսուցիչները և աշակերտները երգում են մի գոհու-  
թեան երգ: Տեսուչը ասում է մի ճառ, իսկ աշակերտ-  
ները պսակով դարձարում են հիմնադրողի և բարե-  
բարաց պատկերները: Սոցանից մէկը կարդում է Ա.  
Պետ. գլ. բ. 5 և եթէ կարող է ինքը առանց ուրի-  
շի օգնութեան այդ ընարանով մի քանի խօսք է ա-  
սում: Յետոյ ամէն դաստնից մէկը սովորածից մի  
բան անկրկ ասում է կամ պատմում է, երգում և  
նուազ են ածում խմբով եթէ սովորել են:

§ 78. գ. Հէն և հանգիստ կատարւում է աշ-  
նան մի զեղեցիկ օրը զինի ճաշու դպրոցի պարտի-  
զի մէջ: Յանկալի է որ այս հանդէսը մեր զիւղական  
տօնախմբութեանց պատկերը լինին:

§ 79. դ. Քրիստոնէ ճանաչող կատարւում է իբրև  
ամենասիրելի մանկական հանդէս ամբողջ քրիստոնէա-  
կան աշխարհի մէջ: Այդ եկեղեցական տօնախմբութեան  
պատրաստութեան հետ (տես § 66) կապւում է նա և հան  
դիսաւոր մասնակցութիւն ընտանեկան ուրախութեան  
մէջ: Քրիստոնէական սիրոյ նուէրները ժողովու-  
մն և չքաւոր աշակերտաց ընծայարեւում են, մասամբ նո-  
ցա առնը այցելելով, որ մէկ մէկ ուսուցիչները կատա-  
րում են, մասամբ ևս հանդիսական զիւերի ժամանակ  
բաժանւում են, որ դպրոցի սրահի մէջ, բայց հեռու



օտար հիւրերից ըստ տեղական սովորութեան ըն-  
տանեքար տօնախմբուում է:

§ 80. Եւ Վարդանի նահապետութեան հանգրուանը (ըստ սո-  
նացուցի) սահման կարգաւորվ բացուում է: Ուսուցիչը  
պատմուում է Վարդանի նահատակութիւնը, վերջին դա-  
սատան աշակերտները Նդիչէից կարդում կամ բերա-  
նացի ատում են. յետոյ գնում են եկեղեցի: Չկնի  
ճաշու եթէ եղանակը ներում է գնում են ճեմելու:

§ 81. Ուսուցչաց և աշակերտաց մէջ ամուր կապ  
հաստատելու համար ամէնից լաւ միջոցն է փոքր և  
մեծ ճանապարհորդութիւնները, որ ամենայն տարի աշա-  
կերտաց հեա ի միասին կատարուում են: Այդպիսի  
ճանապարհորդութիւնները առանց զոհաբերութիւն-  
ների չեն կատարուի: Ուրեմն նոցա խորհուրդը վի  
կարող լինել աշխարհատեսութեան մոլութիւնը և նո-  
րաձեռութեան կիրքը յագեցնելու, հասցա այն մեծա-  
մեծ արգասիքը վայելելու, որ նոքա պատշաճաւոր ձեռ-  
նարկութեամբ բերում են:

§ 82. Ճանապարհորդութեան պատրաստութիւնքը  
մի քանի ամիս առաջ սկսուում են: Ուսուցիչները ա-  
շակերտներին հարկաւոր գիտութիւններով զբաղեցնում  
են, ճանապարհի քարտէջը նկարագրել են տալիս և  
ճանապարհի նպատակը հստատաւ որոշում են:

§ 83. Ճանապարհորդութեան ժամանակ զլիաւոր  
պահանջմունքները սոքա են՝

1. Մեծագոյն պարզութիւն ամենայն տեսակ  
կարօտութեանց մէջ:

2. Խոտադոյն կարգ և լիակատար հնազանդու-  
թիւն:

3. Ըստ կարողութեան բազմակողմանի ուշա-  
դրութիւն այն ամենայն բաների վրայ, ինչ  
որ նկատողութեան չըջանի տակ կարող է  
մտնել:

Ուսուցիչները պէտք է իրրե խղճմտանքի ձայն  
համարեն; թէ այս ճանապարհորդութեանց ժամանակ  
իրանք ևս որպէս չքաւոր աշակերտներ ճանապար-  
հորդեն և թէ ինքնուրացութեան մէջ բարի օրինա-  
կով առաջնորդ լինին:

§ 84. Ճանապարհորդութեան ժամանակ ժողոված  
նիւթը վերադառն ալուց յետոյ ուսման մէջ մշակուում  
և գործ է ածուում:

§ 85. Այսպիսի ազատ յարաբերութեանց կարգը, որ  
ուսուցիչները և աշակերտները միակտան կեանք են  
վարում, դասուում է նաև դասիւնի հարկութեանը, որ այդ  
վախճանաւ նշանակած յանձաժողովից առաջնորդուում  
և ուսման դասերից յետոյ կատարուում է:

§ 86. Առողջութիւնը և ուժեղութիւնը պահպանե-  
լու համար բացի պարտիդի մշակութեան՝ նշանակուած  
են նաև առանձին վարժութիւններ մարմնամար-  
դութեան, որոնք լաւ եղանակի ժամանակ դուրսը,  
իսկ անձրևի ժամանակ կամ մանաւանդ ձմեռը մար-  
դարանի մէջ կատարուում են:

§ 87. Լիակատար հնազանդութիւն և խոտադոյն  
կարգ այստեղ ևս զլիաւոր պահանջմունքներն են:

§ 88. Ամենայն տարի կատարուում է մի հասարա-



իւն անուրիւ, ուր աշակերտները զրաւոր աշխատութիւնք ևս պիտի պատրաստեն: Բացի այս, որքան անդամ որ ուսուցիչները ցանկանան, մասնաւոր քննութիւններ ևս կատարուում են ներկայութեամբ բոլոր ուսուցիչներին: Սոցա նպատակն է, որ ամենայն անդամը քանի մի անգամ ամբողջ դպրոցի վիճակը աչքի տակով առնէ, և իր բռնած տեղը այդ ամբողջութեան մէջ ճանաչէ:

§ 89. Մասնաւոր քննութեանց արդիւնքին համեմատ ամենայն աշակերտ տարիէնը երեք անգամ յառաջադիմութեան նշաններ է ստանում, որոնցից միջին թիւը վերջնական պիտի համարուի, եթէ ուսուցիչը որ և իցէ յարգելի պատճառաւ չկամենայ տարուայ վերջը փոփոխել: Այդ նշաններով աշակերտները դասատանից դասատուն փոխուում են: Հրապարակական քննութիւնը աշակերտի համար նշանակութիւն չունի, ուստի այն տեղ ստացած նշանը առանց հետևանքի մնում է: Նշանները այս երեք աստիճանները ունին՝ աշակերտը դասատան դարգացման համապատասխանում է կամ կատարելապէս, կամ բնաւ ոչ, և կամ միջակ: Որոց նշանն է I. III. կամ II: Սովորութեամբ ընդունուած են հինգ թուանշան գործածել, որոնք ուրեմն հետագայ կարգ կը ստանան՝

I. — II. — III. } նոյն աստիճանների և մնացած  
5. 4. 3. 2. 1. } միջաստիճանների փոխարէն:

§ 90. Ամենայն դասատան մէջ տեսչի համար ազատ թողնուում է շարաթական մի դաս, ուր նա աշակերտներին հաշիւ է պահանջում իրանց յառաջա-

դիմութեան և զանցառութեանց մասին անցած շաբաթուայ մէջ. առանձին ուշադրութիւն է դարձնում նոցա զրաւոր աշխատութեանց վրայ, և առաջնորդում է նոցա, որ ընթերցանութեան գրքերից արդեամբ շահուին:

§ 91. Բացի յիշեալ կարգադրութիւններից՝ դպրոցը պէտք եղած ժամանակը գործ է ածում շատ միջոցներ, որոնք կարգը պահպանելու օժանդակում են, բայց գլխաւորապէս այն նպատակով գործ են դրուում որ ամենայն օտար բան, կարգ ու կանոնին ներհակ բան տեղնուտեղը արգելուի, և եթէ կարգը խանգարուած է՝ վերստին կանգնուի. այդ միջոցներն են պատժերը:

§ 92. Այն դպրոցի մէջ, ուր շատ վարժապետներ կան, ամէնից գլխաւոր կարօտութիւնն է միութիւն պահպանել պատիժների գործածութեան ժամանակ, այնպէս որ չլինի թէ մինը իր թուլութեամբ դպրոցի զգաստութիւնը քանդէ և միւսներին գործը ծանրացունէ, կամ թէ մի ուրիշը իր բրտութեամբ աշակերտաց սիրտը կտորէ և իսպառ ճնշէ: Այս նպատակաւ իւրաքանչիւր վարժապետի սեպուհ պարտականութիւնն է, իր գործած պատիժների մասին հաճախակի ծանուցանել ժողովներին:

§ 93. Պատիժը պէտք է յանցանքին համապատասխան լինի թէ իր տեսակով և թէ իր ծանրութեամբ: Ուրեմն պատժողը ուղղակի մեծ պատժից չպէտք է սկսի, որ չուտով չաղքատանայ: Բայց և այնպէս նոքա բնաւ անարդական չպէտք է լինին, ուստի ոչ մի-



վարժապետ չի ների իրան չորացնել մանուկները, պահանջել որ սոքա իրարու մէջ „ակն ընդ ակամբ և ատամն ընդ ատամամբ“, դատի եղանակը գործ դնեն և այն:

§ 94. Պատիժների աստիճանները ըստ առաւելութեանց սոքա են՝ յանդիմանութիւն, որ ուսուցիչը իր հայեացքով, կերպարանքով, իր շարժուածքով, նշան տալով, բաղխելով, սեղանի վրայ խփելով, իր ձայնի եղանակով, կամ մի հրամանով հասկացնում է:

§ 95. Աւելի սաստիկ է խօսքով լսելի նախատիւնքը: Սա պէտք է կատարուի առանց տաքանալու և կրքի նա մանաւանդ առանց յիշոյների և լիտի հայտոյնաց, հանդիստ, զգուշեցուցիչ խրատողական եղանակով, և աւելի լաւ եթէ չորս աչքի տակ, քան թէ ամբողջ դասատան յանդիման, որ ինքն ըստ ինքեան պատժի մի սաստկութիւն է—բայց միշտ այնպիսի զրուծեամբ և եղանակով, որ մանուկը նկատէ, թէ ուսուցիչը յիրաւի զայրացած և նեղացած է և թէ նորամէջ բնաւ սառնութեան կամ անտարբերութեան նշոյլ չէ երևում:

§ 96. Սպառնալիքն է հետեւեալ աստիճանը: Իբրև երկայնամտութեան հետեանք ուսուցիչը միշտ պէտք է սպառնալիք տայ՝ եթէ միևնոյն յանցանքը կրկնուելաւ, որ միևնոյն է թէ չնայելով ուսուցչի համբերութեան աւելի ծանրացաւ. սպառնալիքները պէտքէ որոշակի ասուի և ճշտութեամբ կատարուի, եթէ նոյն պատժոյ արժանի զէպքը վերատին կրկնուի: Բայց այն բազմաթիւ անորոշ ասուած սպառնալիքը, որոնց մա-

սին թէ վարժապետները և թէ աշակերտները հաստատութեամբ կարող են ասել, թէ նոքա անորոք և անկատար կը մնան՝ դպրոցը բարոյագէտ քանդելու ամենալաւ միջոցներն են: Ուրեմն որչափ կարելի է—սակաւ սպառնալիք:

§ 97. Եթէ ուսման ընթացքը որեւիցէ կերպիւ արգելուի կամ խանդարուի, ուսուցիչը այս պատիժները պիտի գործ դնէ:

ա. Տեղից ոտի վրայ կանգնացնէ, որպէս դի միակ խանդարողը նստած ամբողջութեանից զանազանուի.

բ. Նստարաններից դուրս հանէ.

գ. Նստածներից մի հեռաւոր տեղը, գոր օրինակ սենեակի անկիւնի մէջ կամ դռան մօտ կանգնեցնէ:

§ 98. Դասատանից իսպառ դուրս հանել և վերա-կացուի, աւագ վերակացուի կամ տեսչի մօտ ուղար-կել միայն այն ժամանակ կարելի է, եթէ աշակերտի վարժուէքը յանդուգն խրոխտութեամբ և անսանձ չա-րութեամբ կատարուի. այս պատիժը որչափ կարելի է հազիւ գործ դնել: Այսպիսի պատիժները առան-ձին մատենի մէջ յատկապէս նշանակուում են:

§ 99. Մարմինը կեղտոտ և անմաքուր պահողնե-րին նստացնել առանձին նստարանի վրայ. այս պատ-ժի տևողութիւնը կախուած է տեսչից կամ ժողովից:

§ 100. Աշակերտին աւելի ժամերով պահել դպրոցի մէջ կարելի է նախ՝ եթէ ուսման ժամերը բաց է թողել և երկրորդ՝ եթէ իրան պատուիրած այնպատու-



թիւնը տան մէջ չէ պատրաստել. մի ուսուցչի կամ վերակացուի հսկողութեամբ դա պէտք է իւր զանցառած դասը կամ չկատարած աշխատութիւնը պատրաստէ, որը վերջացնելուց յետոյ կարող է զը նալ տունը:


§ 101. Բուն Բարոյութիւն չանցանէնքը միշտ պէտք է տեսչին և ժողովին յայտնել, որոնք կամ ուսուցչաց ժողովի առաջ կամ նոցա ներկայութեամբ՝ ամբողջ դասատան առաջ պատժուում են:

1. Ծանօթ. Այսպիսի բարոյական յանցանքների թւումն են՝ անվայել յիշոցները, կեխտոտ խօսքերը կամ դորժբերը, դիտատորութեամբ անհնազանդութիւնը, դողութիւնը, ստախօտութիւնը և խարէտթիւնը: Մանուանդ պէտք է ստախօտութեան և խարէտթեան շրջանը շատ ընդարձակ հասկացուի, որովհետև դոքա ուսուցչի և աշակերտի մէջ անխարդախ հաւատարմութիւնը հաստատելու փոխարէն՝ ոտնակոխ են անում, և դպրոցի կորուստն են պատրաստում: Գոցա շարքումն են ճշմարտութիւն ծածկելը, դադտնութիւն, բամբասանք, բժժի և չար մեղադրանք, կեղծատրութիւն, խարդախութիւն, դադտուկ զբքի մէջ նայելը, դուրս դրելը, մնջխօսելը օգնելու նպատակաւ հայն:

2. Ծանօթ. Ինքն բառ ինքեան հասկանալի է, որ այսպիսի հրապարակական պատիժների կարգը չպէտք է դատուին հասարակ հանդիմանութիւնները, կամ թէ այն նախատիմքները, որոնք յառաջադիմութեան նշանները բաժանելու ժամանակ ասում են:

§ 102. Մարմնական պատիժը, զոր օր. ապտակ, զանահարութիւն և այլն՝ խտտութեամբ արգելուած է, իբրև անվայել բռնութիւն մարդկային ազնիւ բանականութեան դէմ:

§ 103. Մեզմ հսկողութիւնն ու զբաղեցնելը թէպէտ պատիժներ չեն, բայց դոքա են այն միջոցները, որոնցմով որ պատիժների կարօտութիւնը նուազանում է: Սակայն ուսուցչի հեղինակութիւնն է և աշակերտի փոխադարձ սէրն է այն միակ հնարը, որով պատիժը իսպառ արտաքսուում է դպրոցի խաղաղ կեանքից:



### Առանձին մասը:

§ 104. Ուսման յառաջադիմութեան օժանդակող կարգադրութիւնները վերաբերում են դասասննակներիին, դասական ժամերի սկզբան, շարունակութեան, աղատ միջոցներին և վախճանին:

#### I. Դասասննակի կարգը:

§ 105. Նստարանները այնպէս են դասաւորուում սննեակի մէջ, որ աշակերտները ձախ կողմից լոյս ստանան: Ուսուցչի կաթեղը դրուում է նստարաններից բաւական հեռաւորութեամբ, ուր ուսուցչիչը միշտ իրա տեղը անչարժ պահպանում է, որպէս զի միշտ կարողանայ բոլոր աշակերտներին աչքի տակ ունենալ: Պաշտօնակատար աշակերտները նստարանների ծայրը նստում են: Այն աշակերտները, որոնք իրանց ընդունակութեամբ, ջանասիրութեամբ և վարքով փոխադարձաբար միմեանց օգնել կարող են՝ նստում են միմեանց կշտին. իսկ նոքա որոնք աւելի կարօտ են



ուսուցչի արթուն աչքին, կաթեղրին մերձ տեղ են բռնում:

§ 106. Այս հասարակ նստարաններից առանձին դրում է պատժի նստարանը:

§ 107. Սենեակի մի պատի վրայ կախաղաններ են չինած, ուր աշակերտները որոշեալ կարգով դղակները, վերարկուները և շալերը կախ են անում:

§ 108. Նոցանից վերև կախ են արած պատմական, բնագիտական և ուրիշ պատկերները, պատշաճաւոր տեղ դրած են՝ սև տախտակը (կողմնակի՝ անկիւնի մէջ, որպէս զի յետ արձակած լոյսը աչքերը չխտղտէ) թուաբանական և կարողալու մեքենաներ, քարտէզներ և այլն. պատուհանները վարաքոյրներ ունին, որոնք ներքեից վերև բարձրանում են:

§ 109. Գասատան պահարանի մէջ պահուում են զրութեան տետրները, քանոնները, զրիչները, քարէզրիչները, այնպիսի զրքերը, որոնք սակաւ են գործածուում, մեծ կարկինը, սպունդը, կաւիճը: Մի ջրի աման և երկու բաժակներ պատշաճաւոր տեղը զըրուում են:

§ 110. Կաթեղրի արկղի մէջ միշտ պէտք է զըտնուի դասատան մատանը, ուր աշակերտների անունը և շարաթական դասերը նշանակուած են, որը ուսման վերջին ժամից յետոյ յանձնուում է աւագ վերակացուին:

§ 111. Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ինչպէս ամենայն սեպհականութիւն, մանաւանդ դասատան կահ կարասիքը, որ մի ընդհանրութեան հաւա-

տարմութեան յանձնած է, աշակերտաց հասար իբրև սուրբ և անմատչելի պիտի լինի:

§ 112. Ինչպէս ամէն մէկը, նոցայէս մանաւանդ պաշտօնակատար աշակերտները պարտաւոր են հոգալ, որ ուսումնարանի կայքը անվնաս մնայ: Այ մի աշակերտ ձեռք չպիտի տայ նորան, մինչև որ իր պաշտօնը կամ ուսուցչի առանձին պատուէրը նորանից այդ չպահանջէ:

§ 113. Ուստի ամենայն տեսակ նկարչութիւն կամ կեղատութիւն պիտի խստիւ յանդիմանուի, մանաւանդ փոքրերը պիտի առանձին հսկողութեան տակ մնան, որովհետև նոքա դեռ սովոր չեն ուսումնարանի սեպհականութիւնը պատշաճապէս յարգել:

§ 114. Գասատունը մտնելուց առաջ աշակերտները պէտք է ցեխը և ձիւնը իրանցից քերեն և թափ տան. նոցա արգելուած է դասատան մէջ վաղիվել, որպէս զի թող չբարձրացնեն. նստարանների վրայ չպէտք է ման դան:

II. Ուսման սկսելուց առաջ կարգը:

§ 115. Ամառն աւելի շուտ է սկսուում ուսումը քան թէ ձմեռը:

§ 116. Առաջին դասըը ըսելով՝ ամենայն աշակերտ պէտք է հանդիստ դասատուն մտնի: Երբ որ աշակերտը իւր գդակը, վերարկուն և այլն կախ արեց և զրքերը դարսեց կամ հանեց իւր առջևը դնելու, նըս-



տում է իւր տեղը և չի վերկենում մինչդէ՛ գասամի-  
ջոցը, կամ մինչև ուսուցիչը նորան պատուիրէ:

1. Ծանօթ. Ուսուցիչը բնաւ չպէտք է թող սայ, որ ա-  
շակերտը

1. Վերարկուով նստի, կամ նոյնը իրա կշտին դնէ.
2. Գլուխը ծածկած կամ վիզը վաթաթած նստէ  
(եթէ ոչ հիւանդութեամբ).
3. Պաշարանի, պատուհանի կամ վառարանի հետ  
խաղայ:

Ե. Ծնօթ. Ամենայն ուսուցիչ պէտք է հակէ, որ զըր-  
բերը, որոնք մանկանց ձեռի տակն են, և մասա-  
ւանդ որոնք վերադարձնելու են, մաքուր և ամբող-  
ջութեամբ պաշարի:

§ 117. Կայրոցի յարգը պահանջում է, որ մանուկ-  
ները իտաակ լուացած, լաւ սանրած, մաքուր և կար-  
գին հարցնուած լինին:

1. Ծանօթ. Եթէ ուսուցիչը նկատէ մանկան էրեւի, վրի  
կամ ձեռների վրայ կեխտ, մաշերը չսանրած, ա-  
նարդ հագնուած, կամ կեխտու հանդերձներ և բո-  
լորովին մաշուած և փթայ ոտամաններ, նա պէտք  
է դանցառուին խտտութեամբ յանդիմանէ և աշխատէ  
որ նա իրան կարգին պահէ:

2. Ծանօթ. Կեխտութեան ամենամեծ աստիճանն  
է, եթէ մանուկը ոչլիններ ունէ: Եթէ մէկի վերայ այդ-  
պիսի կասկած յայտնուեցաւ, վարժապետը պէտք  
է զգուշութեամբ քննէ, գուցէ թշնամութեամբ  
կամ ատելութեամբ բանասրկուել է: Նա պէտք է  
նախ և առաջ հարցնէ մեղապարտի դրացիներից,  
արդեօք նոքա նոյնը նկատել են: Եւ եթէ նա կը  
համոզուի, որ մեղադրութիւնը հիմնաւոր է, նա  
պէտք է խտտութեամբ պահանջէ, որ կեխտուը  
առանց յապաղութեան տեղը թողնէ և առան-  
ձին նստարանի վրայ բազմէ: Մնարդարութիւն

կը լինէր ուրիշների դէմ, էթէ ուսուցիչը իր թու-  
րափրտ կարեկցութեամբ այդ պատիժը չենաւճը-  
ղէր: Այդ պատիժը տեսած է քանի որ տեսուչը կամ  
վարժապետները չհամարուն, որ պատժուածը վե-  
րստին մաքրուեցաւ:—Իսկ եթէ մեղադրութիւնը ան-  
հիմն դուրս եկաւ, ուսուցիչը պէտք է իր բոլոր դո-  
րութիւնը գործ դնէ, որ մեղապարտին պաշտպանէ  
զրպարտութենից, որ ընկերները սորան չնե-  
ղացնեն սորանից փախչելով կամ ուրիշ որ և իցէ  
նկատողութիւնների միջև որդութեամբ իրանց զըլու-  
անքը ցոյց տալով:

§ 118. Առաջ քան ուսուցիչը դայ, պէտք է դա-  
սատան միջ լիակատար հանգստութիւն տիրէ:

Ծանօթ. Ուսուցիչը չի սկսում խօսել, մինչև որ կատա-  
րեալ լրութիւն չհաստատուի և ամէնի աջըը նորա  
վրայ դարձրած չլինի:

§ 119. Ներս մտնող ուսուցիչը պէտք է մի ուրախա-  
ւիրտ „բարե“ կամ „բարի լոյս“ ողջոյնով ընդունուի,  
ուր աշակերտները նաև ոտի վրայ կանգնում են:

§ 120. Ամենայն օր ուսուցիչը ուսումը սկսելից ա-  
ռաջ՝ հարցնում է աշակերտներից, արդեօք ամե-  
նայն բան կատարել են, ինչ որ նոցա առանձին պա-  
տուիրած էր. և եթէ մի բան պակաս է՝ նշանակում  
է փոքր մտանի միջ իրբև դանցառութիւն, որը միւս  
դասին դարձեալ պահանջում է: Այդ մասունիկը առ-  
հասարակ դասատան յիշատակարանը պիտի լինի, ուր  
բացի դանցառութիւնները նշանակում է նաև ամե-  
նայն բան, ինչոր աշակերտները գուցէ մտանային՝  
զոր օրինակ տուած դասը, առանձին պատուէրները,  
առանձին պատրաստութիւնները: Եւ եթէ աշակերտը՝



հայեցում այդ յիշողութեանց՝ դարձեալ զանցառու գրտնութի, ուսուցիչը պարտաւոր է պատճառը խըստաբառ քննել, արդեօք նոյնը թուլամտութեանից պատահեցաւ թէ աւելի հիմնաւոր և ստիպուած պատճառից: Այսպիսի դէպքերը ուսուցիչը պարտաւոր է տեսչին կամ ժողովի մէջ յայտնել, որ միատեղ խորհրդակցութեամբ պէտք է աշխատել մի կերպ հրնար գտնել, որ զանցառութեան առաջը առնուի:

§ 121. Մատենիկի մէջ հարկաւոր արձանագրութիւններ գրելուց յետոյ, ուսուցիչը զաստատան մեծ մատենանի մէջ նշանակում է բացակայ եղած աշակերտներէ անունները: Նա հարցնում է «նո՛ւ է պակաս», Պաշտօնակատարները կարգաւ վեր են կենում և իրանց նստարանի մէջ պակասողների անունը ասումեն: Ուսուցիչը պակասողների անունաց կշտին նշանակում է՝ արդեօք դժբա հիւանդ են կամ թողութիւն խնդրել են բացակայ դասուելու համար:

§ 122. Թողութիւն առած կամ հիւանդ գրուելու համար հարկաւոր է, որ պակասողը մի աղղարարութիւն իր ծնողներից կամ թողութեան թուղթ տեսչից բերէ կամ ուղարկէ: Այդ թուղթը զաստատան մէջ մի բեռնով վրայ կախ տուած մնում է, մինչև որ պակասողը վերադառն սկսէ դասերին մասն գալ: Աթէ ծրնողները, ազդականները կամ ընկերները թողութիւն խնդրեն առանց այն թղթի, այդ չպետք է ընդունուի՝ եթէ չստ էլ հարկաւոր եղած լինէր բացակայութիւնը:

§ 123. Առանց նախապէս տեսչից հրաման խընդ-

րելու, կամ եթէ սա թոյլտուութիւն տալ չյօժարեցաւ՝ դաս բաց թողնելը ծանր յանցանք պիտի համարուի, և ըստ այնմ տեսուչը պատժում է:

§ 124. Դասատան մատենաներից աւագ վերակացուն ամենայն շաբաթ պակասողների ցուցակ է կազմում, որ երեք սիւնից է բաղկացած՝ հիւանդ, թողութիւն առած և թողութիւն չառած վերնագրով:

§ 125. Ով որ ուսուցչի մանկուց յետոյ ուշացաւ՝ կանգնում է դռան մօտ, մինչև որ ուսուցիչը իր գործքի կապը չկտրելով՝ յարմար համարէ նորան դիմելու. այդ ժամանակ ուսուցիչը միշտ հարցնում է ուշանալու պատճառը, յանդիմանում է և պատուիրում է, որ չկրկնէ, կամ երբեմն ներում է, եթէ նորողական պատճառները նորան յետ պահեցին: Երբեմն ևս ուսուցիչը պատուիրում է, որ ուսման աւարտելուց յետոյ զպրոցի մէջ մնայ և ինչ որ աշակերտը իր ուշանալովը դասից զանցառեց՝ նոյն պատրաստէ:

### III. Ուսման ընթացքի ժամանակ կարգը:

§ 126. Ուսումը միայն այն ժամանակ արդասաւոր է լինում, երբ նորա ընթացքի ժամանակ կարող ամենայն խտտութեամբ պահպանուում է: Եւ ուրեմն նախ և առաջ ամենայն արդեւրները պէտք է վերացուին, ամենայն օտարոտի հանգամանքները, որք յառաջ զալ կարող են, յետ պէտք է պահուին:

§ 127. Մեծագոյն արդեւր է ամենայն տեսակ շրջովը, ինչպէս ոտերը խանդացիները, գրքերը, տախտակները և ուրիշ այսպիսի բաները դարսել և հանելը



կամ վեր ու վար քաշքշելը, մանաւանդ խօսելը, մըր-  
մնջալը, ծիծաղելը, փոխապը: Բայց այս՝ արդիւառիթ  
է ամենայն տեսակ դրագմունք, որոնք մանուկների  
միտքը դասախօսութեան նիւթից յետ քաշում և ու-  
րիշ կողմն են դարձնում: Այդ շարքումն են անհան-  
զիստ նիստը, այս կողմ այն կողմ քաշուիլը, ա-  
ռաջ ու յետ ծռուելը, սեղանի վրայ պարկելը, ուտե-  
լը, ներս ու դուրս անելը, սեղանի վրայ խաղալը, և  
աւելի վատ եթէ խաղը դադատուկ կատարում է սե-  
ղանի տակ, գրքի մէջ կարդալը՝ երբ ուսուցիչը խօ-  
սում է, հետաքրքրութեամբ այս ու այն կողմը նայ-  
ելը, կամ ապուշի պէս աչքը մի կէտի վրայ պըն-  
դացնելը:

§ 128. Ուսուցչի հրամանով, կամ աւելի լաւ՝ մի  
հանդարտ բաղխանիքով, կամ մի նշան տալով հան-  
գատութիւնը առանց յապաղութեան պէտք է վերա-  
կանդնուի:

§ 129. Ուսման ժամանակ մանուկները նստած են  
ուղիղ և վայելուչ կերպիւ իրանց սեղերի վրայ, ոչ  
չատ յետ գցած, ոչ էլ առաջ թեքուած, և ոչ էլ  
կողքին սլորած: Ունեւրը զուգահեռաւոր մէկ մէկու  
կշտին հաստատ կանդնած են գետնի վրայ, և չպէտք  
է համարձակուին մէկ մէկու վրայ ձգուիլ: Չերգերը  
գրած են սեղանի վրայ, որպէս զի միշտ տեսանելի  
լինին ուսուցչին և սեղանի տակ առանց հարկաւո-  
թեան չըրաղուին կամ գրպանի մէջ չպահուին: Երե-  
սը և աչքերը միշտ ուսուցչին են դարձըած:

§ 130. Եթէ ուսուցիչը մի աշակերտի անունը տայ,

նա ոտի է կանդնում արագութեամբ և ուղիղ,  
այնպէս որ ոչ գլուխը ծռած ունէ ոչ էլ բա-  
ղակների վրայ թեքուած է: Եթէ մինը պատասխան  
տալու է, այն ժամանակ ասում է համարձակ և բար-  
ձրը, առանց ճոռումարանութեան և ձգձգելու:

§ 131. Մանուկներին ոչ միայն ներելի է, այլև առ-  
ուսումը ունեցած ուշադրութեան և սիրոյ գովելի հա-  
ւատուիքը պիտի համարուի, եթէ նոքա մի նշան են  
տալիս, թէ յանկանում են պատասխանել հարց-  
մունքին: Բայց այս նշանը պէտք է լինի միայն  
ձեռք բարձրացնելը: Իսկ միւս բոլոր ձգնեռանդ ու  
գրգուած նշանացոյցները, ինչպէս սեղից վեր թըռ-  
ելը, առաջ պարկելը, ձայն տալը կամ շտապովի պա-  
տասխանը կամ ևս միաձայն պատասխանը առանց  
ուսուցչի առանձին պատուիրանաց—այս ամենայն  
բան բնաւ պէտք չէ համբերել:

§ 132. Բայց ի հարկէ դաս տուող ուսուցիչն է դա-  
ստան աւելը և պատիժ տուղն ինքն է, ուրեմն այ-  
ցիւղներից ոչ որ չպիտի խառնուի ոչ նորա գառի  
և ոչ նորա կարգապահութեան մէջ, իսկ եթէ որ նը-  
կատողութիւն ունի՝ ժողովի մէջ պիտի յայտնէ:

§ 133. Մի քանի դրաղմանց և դասատուութեանց  
ժամանակ լինում են փոփոխութիւններ:

§ 134. Աղօթելու ժամանակ բոլոր աշակերտները  
ոտի են կանգնում:

§ 135. Եթէ դպրոցի մի անդամը կամ հիւր մըտ-  
նում է, աղէքըրը ոտի են կանդնում, զուլս են առ-



լիս և սպասում են նշանին, որ ուսուցիչը տալիս է նստելու:

§ 136. Եթէ պէտք է կարդացուի՝ դրքերը շուտ՝ բայց հանդարտ հանուում են, նմանապէս հանդիստ բացուում են և ընթերցողի առաջ ուղիղ դրուում են և չէ թէ ծուռը կամ ծնդի վրայ:

§ 137. Ում որ կարգալ պատուիրել են, նա պէտք է վեր կենայ, ուղիղ կանգնէ, ոչ կուրծքը պէտք է սղմի, ոչ էլ զլուխը կախ տայ, զիրքը բռնում է իր առաջ հարկաւոր հեռաւորութեամբ (սեղանի վրայ չպէտք է համարձակուի թողնել) կարգում է յըստակ, բարձր և զօրեղ ձայնով:

§ 138. Գրութեան դասի սկզբին պէտք է մի քանի անօրէնութիւններ կատարուին, ուր ուսուցիչը աւանձին ուշադրութիւն պիտի դարձնէ կարգի վրայ: Պաշտօնակատարներից մինը միւս պաշտօնակատարներին տալիս է տետրակներ, զրիչներ և քանոններ. սորա էլ իրանց նստարանների ընկերներին բաժանում են այդ պիտոյքները: Եւ այսպէս ամենայն բան մեծ ճշտութեամբ և հանդիստ պէտք է կատարուի:

§ 139. Նոյնպէս է ընթանում դասի վերջը. պաշտօնակատարները իրանց նստատեղիներումէջ ժողովում են առարկաները, որ առաջ բաժանեցին և մի թղթով փաթաթում իրանց նստարանի տետրակները զրիչները և քանոնները առանձին:

§ 140. Եթէ թուարանութեան կամ երդեցողութեան մէջ ուրիշ բաժանմունքներ են սահմանած,

քան թէ միւս դասերի մէջ, այն ժամանակ ուսուցիչը անշտապ և անշփոթ տեղերը փոխել է տալիս:

§ 141. Գրաւոր հաշուելու ժամանակ ամէն մէկ բաժանմունքը զբաղուում է լուռ վարժապետի կամ դրքի առաջնորդութեամբ:

Այդ ժամանակ ընաւ չպէտք է թողնել, որ աշակերտները փախապով պարապեն, մինչև անգամ նոցա չըթուենքները ամենին չպէտք է շարժ դան. այսպէս սուս և սննկատուղի կերպիւ պէտք է կատարեն նոքա իրանց գործը:

§ 142. Երգելը կատարուում է ուսի վրայ:

§ 143. Եթէ բերանացի ասողները կանց առնեն, կմկման, կրկնեն, ուղղեն, խօսքի տեղը փոխեն, խտանեն, սխալ կապեն՝ ուրեմն լաւ չեն սովորել: Ուր այսպիսի մի բան երևայ, բերան ասողը պատուէր է ստանում կանգնած մնալ, և երբ միւսները կարգին ասացին, ուսուցիչը կանգնածին մի անգամ ևս քննում է, արդեօք նա իրաւ չէ սովորել, թէ սխալ ասածը միշտն բոպէական մոլորութիւն կամ մի տեսակ անյաջողութիւն էր:

§ 144. Բերան ասելու ժամանակ դրքերը ծածկուած են մնում. ուսուցիչը չպէտք է թողնի որ մատը դրքի մէջ ծածկած տեղը դրուի: Նա չպէտք է մինչև անգամ օգնէ, այլ որքան կարելի է թողնէ, որ բերան ասողը իր անձնական օգնութեանը և յիշողութեանը ապաւինի:

§ 145. Եթէ ստորին դասաներում կարգալու կամ հաշուելու ժամանակ առանձին բաժան



մունքները կաթնեղրի կշտին պէտք է կանգնեն, նոքա պէտք է այս տեղափոխութիւնը հանդարտ, հանդիստ և կարգ պահպանելով կատարեն. նստած մնացածները պէտք է նոյնպէս հանդիստ մնան և իրանց խնդիրներով զբաղեն:

§ 146. Բայց ուսուցիչը երբէք մէկին չպէտք է հարցնէ, այլ իր հարցերը միշտ պէտք է ամենեցունց դիմէ, որոնք առանձին զբաղմունք չեն ստացել, և ապա թէ՛ դոցանից մէկին ընտրէ, որ պատասխան տայ: Տախտակի մօտ ևս ուսուցիչը չպէտք է միայն մէկի հետ զբաղի, այլ պատուիրէ մէկին որ խնդիրը բերանացի լուծէ, իսկ միւսը այդ ատածի համեմատ տախտակի վրայ դրէ կամ նկարէ: Առ հատարակ ուսուցիչը միշտ զբաղուած է ամբողջի հետ և ոչ թէ՛ մէկի հետ:

IV. Ուսման դասամիջոցների ժամանակ կարգը:

§ 147. Ամենայն դասից յետոյ, որ մի ժամ տևում է, նշանակուում է քառօրյ ժամ հանգստութեան միջոց. այս ժամանակամիջոցի մէջ ևս պէտք է դարձնալ մի քանի բան անօրինուի:

§ 148. Ամենայն ուսուցիչ իր դասից յետոյ իսկոյն դասատան մատենի մէջ հարկաւոր բաներ պէտք է արձանագրէ: Այս մատենան է զպրոցի ներքին կապի այն արտաքին միջոցը, որով պպրոցի ամեն մի անդամը ծանուցում ստանում է ուսման ընթացքի մասին, և առ հատարակ ամենայն հանգամանքների մասին, որ պպրոցին վերաբերում է:

§ 149. Ամենայն դասատուութեան օրը արձանագրուում է առաջին դասից սկսած մինչև վերջին դասը: Օրուայ դասատուութեան առարկայի տակ ուսուցիչը արձանագրում է այն, ինչոր դասի ժամանակ աւանդեց, և այնքան մանրամասն, որքան որ հնարաւոր է, որպէս զի ամենայն անդամ կարողանայ մտքով նոյն դասի մէջ դանուիլ և այդ միջոցով իւր սեպհական դասերը կապել կարողանայ այդ դասի հետ: Նոյն ուսուցիչը մի առանձին լուսանցքի վրայ նշանակում է այն՝ ինչ որ իւր դասատուութեան մէջ պատահած՝ բայց ուրիշ առարկաներին վերաբերեալ՝ նիւթ աւանդուեցաւ հարեանցի, որով իմաց է տալիս այն առարկաների ուսուցիչներին, որ եթէ հնարաւոր է շուտով իրենն այն նիւթի վրայ աւելի մանրամասն և համաձայն իւրեանց դասընթացի:

§ 150. Մատենի մի կրեսի վրայ աշակերտաց անուններն են նշանակուած իրանց նստած սեղի համեմատ:

§ 151. Գասը վերջանալուց յետոյ վերակացուն կամ ուսուցիչը աշակերտներին տեսնում է պարտեզը կամ մարդարանը վատ դնակին: Միայն տկարը իրաւունք ունէ դասատան մէջ մնալ և մէջը ազատ մանզալ՝ առանց չիօթ հանելու:

§ 152. Սանդուխները վրայ դոյզ դոյզ իջնում են՝ այնպէս որ ոչ դասատան մէջ ոչ էլ սանդուխի վրայ խառնակութիւն կամ խանդարմունք յարաջ դայ: Պաշտօնակատարներն էլ պէտք է օգնեն հակո:



ղութեանս. դոցանից մէկը ամենից վերջը դուրս է դա-  
ւիս դասատնից:

§ 153. Այդ աղատ ժամանակ աշակերտները կա-  
րող են խօսել, երգել, խաղալ, նախաճաշիկ ուտել և  
պատուիրած կարգը պահպանելով ջուր խմել:

§ 154. Այդ ժամանակ ոչոք իրաւունք չունեն փըռ-  
նըչու մօտ կամ տունը դնալ:

§ 155. Գասամիջոցի ժամանակ թոյլադրած աղա-  
տութիւնը պէտք է գործ ածել միմեանց հետ ուրախ  
ժամանակ անցկացնելու համար, սերտ ընկերութիւնը  
մանաւանդ ոչ մի կերպով չպիտի խանդարուի, ուստի  
վերակացուները, որոնք իրանց յանձնած դասա-  
տանն վրայ հսկողութիւն ունին, զոչոյ՛ ալիտի վննն,  
որ խռովութեան նշոյլ անդամ չծաղի այդ ընկերու-  
թեան մէջ, իսկ եթէ անկարգութիւն սլատճառող ա-  
շակերտներ գտնուին, նոցա ազատութիւնը սահմանա-  
փակուած կամ մի որոշեալ ժամանակով խտրու ար-  
դելուած է:

§ 156. Արդեօք դասամիջոցների ժամանակ ամե-  
նայն դասատուներ առանձին մնայ, թէ բոլորեքեանք  
միմեանց հետ միանան՝ կախուած է հսկող վերակացուի  
կամքից: Աւագ վերակացուի բարձրագոյն հսկողու-  
թեամբ՝ դժուար չի լինիլ ամենայն տեսակ հսկողու-  
թեանց մէջ մի միութիւն պահպանել: Մանաւանդ  
նա պէտք է հակէ, որ վերին դասատուները նեղ-  
սիրտ գորողութիւն չբանեցնեն փոքրերի առաջ:

§ 157. Աւագ վերակացուն կամ օրապահ վերակա-  
ցուն նշան է տալիս դասամիջոցը լրանալու մասին, ու-

աշակերտները դարձեալ զոյգ զոյգ կարգով վերադա-  
նում են. պաշտօնակատարներից մէկը առաջինն է  
մտնում դասատան մէջ, որպէս զի կարգը պահպանէ:

Վ. կարգ ուսումը վերջանալուց յետոյ:

§ 158. Ամենայն վարժապետ պարտաւոր է ճիշտ  
ժամանակին վերջացնել դասը:

§ 159. Եթէ ամբողջ ուսման ժամանակ ամենայն  
բան ըստ կարգին ընթացաւ, իսկ վերջանալու ժամա-  
նակ կարգը խանդարուելի ակտուեցաւ, այսինքն դա-  
սատունը անպիսի կերպարանք ստացաւ, իբրև թէ  
մի խաժամուժ ամբոխ իրարու խառնուեցաւ, այդ  
ցոյց է տալիս՝ թէ այդ դպրոցի կառավարութիւնը  
դեռ շատ թոյլ է եղել: Շատ վատ տղաւորութիւն է  
անում, եթէ մանկանց կերպարանքից և շարժողութիւ-  
նից ուրախութիւն է չտղում, թէ ահա ուսումը վերջա-  
ցաւ, և շտապով դասատնից դուրս գալ աշխատում են:

§ 160. Ուսուցիչը ինքը տալիս է նշան վերջանա-  
լուն, և ամենին չպէտք է թողնէ, որ մտնուկները  
բռնաբարին իրան նշան տալու: Այսպիսի խաղկատակ  
նկատմունքներին, թէ ,,զանգը խիեցին, մենք պէտքէ  
այստեղ կամ այն տեղ հասնենք“, կամ յանկարծակի  
վեր կենալուց, զբքերը ծածկելուց և կապելուց յետոյ  
հանդերձեղէնները ձեռքին առնելուց յետոյ՝ իսկոյն  
պատիժ պիտի տրուի, որը աւելի յարմար է, եթէ այդ-  
պիսի անհանդիստ մասուկը խիստ յանդիմանութիւն  
ստանայ և սպասէ, մինչև ամենքը դասասննակը  
թողնեն:



§ 161. Երբ ուսուցիչը վերջանալու նշանը տուեց, պաշտօնադատարանները կախադանի մօտ են կանգնում իրանց ընկերների վերաբերուածները վեր են բերում և տալիս են տիրոջը: Երբ բողոքեցեանք հանդարտ հագնուելցան և զրօքերը զարսեցին, ուսուցչի նշանով սկսում են ողջոյն տալով կարգով դուրս գնալ:

§ 162. Աշակերտները միմեանց սէտք է զգուշացրնեն և աշխատեն, որ ճանապարհին իրանց վաշկուէ վարմունքով զպրոցին պատիւ բերեն:



2013

Գինն է 25 տա:

« Ազգային գրադարան



1958 NL0053364

Въ Типографіи Амбарцума Әнфіаджіанцѣ и К-о